

49-11  
55a

ԿՐԱՐՍ

# ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾ-ՔՆԵՐ



ՊԵՏԶՐԱՏ  
ՀԼԿՆԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆՆԵԿԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1937

2011-0

|| a p m.  
3-1421a պրպս

891-995

Ա-85

# ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱԾԲՆԵՐ

ՀԱՊԻԿԸ ՅԵՎ ՆԿԱՐՆԵՐԸ  
Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ



4854

ՊԵՏԶՐԱՏ

ՀԼԿՅԵՍ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԿԻՑ ՍՈՆԿԱՊԱՏԱՆՆԱԿԱԿԱՆ ՐԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ \_\_\_\_\_ 1937

Հատ. խմբագիր՝ Սիրա  
Տեխն. խմբագիր՝ Ստ. Ալբունյան  
Սրբագրիչ՝ Ս. Շահրազյան

3959-87

Գլավլիտի լիազոր Կ— 4568, պատվ. 462,  
Հրատ. 4047, տիրաժ 3000  
Տպ. մամուլ 3, հեղ. մամուլ 11½, մեկ մամ. 23040 նիշ, թղթի  
չափեր 62×94.

Յերեան, Պետհրատի տպարան, Լենինի, № 65



Լսեցեք, սիրելի հոկտեմբերիկներ, յես այժմ ձեզ պատմելու յես մի պատմութիւն, վորը կարճ ե լինելու, բայց հետաքրքրական:

Փոքրիկ Հանն ապրում ե բուրժուաների աշխարհում, մի շատ մեծ քաղաքում. այդ քաղաքը կոչվում ե Բեռլին (Գերմանիայի մայրաքաղաքը):

Հաննը խուճուճ մազեր ունի, կապույտ աչքեր, իսկ այտերն այնպես գունատ են: Նա որերով քաղցած ե մնում, վորովհետեւ նրա հայրիկն ու մայրիկը գործազուրկ են: Մեծ-մեծ գործարանների տերերը նրանց փողոց շպրտեցին:

Յերբ նրա հայրիկն ու մայրիկը խոսում են մեր կարմիր հայրենիքի մասին, Հաննը թողնում ե իր խաղն ու քարացած լսում: Նրա կապույտ աչքերը մեծանում են ու փայլում, նա սիրում ե լսել կարմիրների պատմութիւնը: Հաննը յերանի յե տալիս մեր հոկտեմբերիկներին, վորովհետեւ նրա հայրիկն ու մայրիկը գործազուրկ են, նա կոշիկներ չունի հագնելու և ձեզ նման մանկապարտեզ չի վազում:

Մի որ Բլ Հաննը չխաղաց ու շատ տխրեց: Նրա հայրիկին ու մայրիկին վոստիկանները ծեծել եյին ուղիներէ մտրակներով: Նրա հայրիկն ու մայրիկը ուրիշ շատ գործազուրկ պրոլետարների հետ շարքերով դնա-

ցել էյին փողոցներով ու գոչել՝ «կորչեն բուրժուաները: Կեցցե Կարմիր Հոկտեմբերը»: Հաննի նման այն ուրը տխրեցին շատ յերեսաներ, վորովհետեւ նրանց հայրերն ու մայրերն ել ծեծվել էյին:

Այժմ իմացա՞ք, սիրելի հոկտեմբերիկներ, թե ո՞վ է Հաննը:

Հոկտեմբերիկները խնդրում էյին իրենց ղեկավարին, վոր նա շարունակեր պատմությունը և աղաղակում էյին.

— Ախ, յերանի Հաննը մեզ հետ լինի, մենք իսկի չենք թողնի, վոր նա տխրի:



Նա ծիծաղկոտ է, այնքա՞ն ծիծաղկոտ, կապույտ ծովի պես կապույտ աչքերով մի փոքրիկ աղջիկ — անունը՝ Դորա: Նա քայլում է համարձակ, յերգում է զիլ ձայնով. իսկի մենակութուն չի սիրում — միշտ ընկերների հետ է լինում: Յերբ սկսվում է խաղը, Դորան իրեն պահում է մեծավարի, ընկերներին կազմակերպում է ու ղեկավարում խաղերի, յելույթների ժամանակ:

### ԼԵՆԻՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Հանգստի ուր եր: Առավոտվանից Դորան անհանդիստ եր: Շտապ հագնվեց, շտապ լվացվեց ու հավաքեց ընկերներին:

Նա մտածում եր մի շատ լուրջ բան, դրա համար ել դեմքը խոթոռելով՝ ասաց կամացուկ.

— Այ թե իմանա՞ք, Դիանա, Լենա, Եֆրիկա, Մավրիկ...

— Ի՞նչ, — աղաղակեցին յերեսաներն ու սկսեցին վազվզել իրար խառնված:

— Սպասեցեք, չարածճիներ, հանդարտ, — հանդիմանեց Դորան, մոռանալով, վոր ամենաչարածճին ինքն է յեղել միշտ:

Դորայի մտքերը շատանում էյին, դեմքն ավելի յեր լրջանում, կարծես բոյ եր քաշում, կարծես մեծ, չա՛տ մեծ մարդ եր դառնում:

Թե իմանայիք ի՞նչպես եր նա լուրջ:

Նա համարձակ առաջ գնաց ու աղաղակեց.


— Գնացե՛ք ձեր տներն ու բերե՛ք կարտոնի կտորներ, կառուցում ենք...

— Ի՞նչ, — նորից աղմկեցին յերեխաները:

— Լենինի դամբարանը, — պատասխանեց Դորան, կապույտ աչքերը չհեռացնելով սենյակի կենտրոնից:

— Դամբարանը, — կրկնեցին յերեխաներն ու վազեցին իրենց տները:

Քիչ հետո յերեխաները վերադարձան վազեվազ, չնչասպառ, ձեռքերին բռնած կարտոնի կտորներ:



Դորան քայլում եր սենյակում: Փոքրիկ Մավրիկը փորձում եր նրան ծիծաղեցնել, բայց իզուր, այս անգամ այդ նրան չեղ հաջողվում ու սաստիկ զայրացած եր:

Նրանք լուրջ եյին, այնպես լուրջ. ամեն ինչ մոռացել եյին, միայն աշխատանքն եր նրանց իսկական աշխարհը:

Նրանք Լենինի հետ եյին: Ով ինչ գիտեր ու լսել եր Լենինի մասին, այժմ մտաբերում եր ու շրթունքները սեղմած՝ կտրատում կարտոնները:

Հետո կտրատած կարտոնները ներկում եյին կարմիր գույնով:

Իսկ Դորան վորպես մի ճարտարապետ, սենյակի մեջտեղում կանգնած քառակուսի կարտոնները դարսում եր իրար վրա:

— Լավ կտրատեցե՛ք, — բղավում եր նա ու ելի դարսում: Նրան ոգնում եր ճարպիկ Մավրիկը:

Դորան ուրախացավ և քիչ մնաց ցատկեր, յերբ դամբարանն արդեն պատրաստ եր, բայց հիշեց, վոր ինքը ղեկավար եր ու հանդարտ ժպտալով կանգնեց:

#### ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՅԵՎ ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԿՈՒՎՐ

Լենան պակաս հնարագետը չեղ. նա տեղից ցատկեց և դամբարանի չորս կողմը կարմիր սահման գծեց:

Դորան այդ փայլուն մտքից այնպես ուրախացավ, կանգնեց դամբարանի շուրջ, կարմիր սահմանից ներս ու աղաղակեց.

— Այստեղ կարմիրներ են՝ յես, Լենան ու Եֆրիկան: Իսկ Դիանան ու Մավրիկը՝ սպիտակներն են: Դուք կլինե՛ք վոստիկաններ չար, այնպես չար, ու կըհարձակվե՛ք մեզ վրա:

Դորան մի քիչ մտածելուց հետո, մատը թափահարելով՝ ավելացրեց, — իսկ մենք կարմիրներս չենք թողնի, վոր սպիտակները տրորեն մեր կարմիր սահմանը:


Ել ժամանակ չկորցրին: Դորան վորպես մի կարմիր պահակ կանգնեց դամբարանի առաջ. նրան հետևեցին Լենան, Եֆրիկան:

Սպիտակները՝ Դիանան ու Մավրիկը՝ չունենե՞րը պահած, գաղտագողի մոտենում էյին։

Կարմիրները քնած չէյին։ Դորան քաջ հրամանատարի պես աղաղակեց.

— Հարձակում, կրակ անպիտան սպիտակների վրա,—բայց ինքը տեղից չչարժվեց՝ պահակ եր անվախ։

Քանի գնում խաղը տաքանում եր ու իրական դառնում։



Լենան ու Նֆրիկան կռվում էյին խկական զինվորների պես—տրա տա՛—տա՛—տա՛, բո՛ւ... Վորպես թե թնդանոթներ էյին արձակում ու կրակում հրացաններից։

Սպիտակներն ել պակաս կռվողներ չէյին. Դիանան քրտնեւ եր։ Սորամանկ Մավրիկն ուզում եր ծիծաղանել կարմիրներին, թուլացնել նրանց ու այդպիսով սահմանն անցնել։

— Փիչտ—փիչտ... անելով խփեց Նֆրիկայի փորին, Նֆրիկան թուլացավ ծիծաղից և քիչ եր մնում Դիանան անցներ սահմանը։

Դորան, յերբ տեսավ ընկերները վտանգի մեջ են, տեղից ցատկեց ու կատվի պես ճկուն ցատկումով բռնեց Դիանայի վոտը։

Յերբ Մավրիկը տեսավ՝ իր ընկերը բռնված եր, ինքն ել շփոթվեց... այդ ժամանակ Նֆրիկան բռնեց Մավրիկի ախանջից սկսեց քաշել։

— Դե, գնացե՛ք, բուրժուականեր,—ծիծաղում էյին կարմիրները։

— Մենք սրանց մի լավ կծեճենք,—ասաց Նֆրիկան։

— Չե,—պատասխանեց Դորան,—մենք սրանց կընստացնենք մեր կողքին ու պատմություններ կանենք։

Պարտված սպիտակներն այնպես լուռ էյին ու յենթարկվում էյին կարմիրների հրամաններին։

## ՀՐԱՇԱՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Դորան մի քիչ մտածեց ու աչքերը չհեռացնելով դամբարանից սկսեց պատմել.

— Ձմեռ ժամանակ եր, այնպես ցուրտ եր ու ենքան ձյուն, յերբ մեռավ մեծ, շատ մեծ առաջնորդ ընկեր Լենինը...

— Գիտե՛ք, յերեխաներ, մեր ընկեր Լենինը ենքան ե բուրժուաներին ատել, հետո ասել ե, վոր պետք ե բուրժուաներին տապալել...

Նֆրիկան ուզում եր անպայման մի բան ավելացնել ու շատ անհանգստանում եր.

— Ըհ, վատ բուրժուաներ,— նա դարձավ դեպի Մավրիկն ու Դիանան,—ենքան եք բանեցնում բանվորներին առավոտվանից մինչև կես գիշեր, էլի առավոտ ու գիշեր, հետո ենքան քիչ եք փող տալիս,—ապա Նֆրիկան անհամբեր ու հանդուգն լեզուն հանեց նրանց վրա։

Դիանան ու Մավրիկը քիչ եր մնում լաց լինեյին։  
— Մենք չենք ուզում սպիտակներ լինել, մենք ել  
ենք ուզում կարմիրներ լինել, — լացակումած ասացին  
նրանք։

— Մենք ձեզանից ել չատ ենք սիրում Լենինին,  
— ասաց Դիանան ու կանգնեց տեղից։

Եֆրիկան ու Լենան ծիծաղում էին...


Քիչ եր մնում յերեսաները նորից ընդհարվեյին,  
յերբ Դորան վորպես մի մեծ մարդ կարգադրեց։

— Թող Դիանան ու Մավրիկն ել կարմիրներ լի-  
նեն։

Նրանք այնպես ուրախացան, այնպես ուրախացան,  
այժմ բոլորը հաշտ ծիծաղում էին։

Պատմությունը վերջացավ — վազվզում էին ու  
թռչկոտում, չարածճի Մավրիկը կարողանում եր ծի-  
ծաղեցնել բոլորին։ Նրանք կշկշում էին։

Այնքան ծիծաղկոտ եր, այնքան աշխույժ, կա-  
պույտ ծովի պես կապույտ աչքերով՝ այն փոքրիկ Դո-  
րան։



Արևը տաքացավ ու ժպտաց խորհրդային յերկրին։

Անհամբեր ու չարածճի մանուկներն արդեն գար-  
նան յերգեր էին յերգում։ Չանձրացել էին ձմռան  
խաղերից ու ձնե մարդից։ Նրանք նոր ու կայտառ խա-  
ղեր էին ուզում, անհամբեր սպասում էին գույնըզ-  
գույն հյուրերին՝ կանաչին, ծաղկին, թիթեռնիկին,  
բզեզներին ու բազմաթիվ թռչուններին։

Արևը շողշողում եր ձյան շերտերի վրա։ Մանուկ-  
ները խաղում էին մանկապարտեզի բակում, ձյունը  
հալվում եր, նրանք ծիծաղում էին ձյան անգորու-  
թյան վրա։

Հանկարծ Շուշիկը ճչաց ուրախացած, յերեսաները  
վաղեցին նրա մոտ։

Չյան տակից սպիտակ թերթիկներով մի ծաղիկ  
եր նայում։

— Ախ, ի՞նչ լավն է, ինչպես մրսում է, — չչնչաց  
Շուշիկը։

Առաջին սառն ու սպիտակ ծաղիկը ժպտաց մա-  
նուկներին ու արևոտ յերկրին։

Շուշիկը կռացած իր տաք շնչով տաքացնում եր  
նրան ու ձյունը մաքրում թերթիկների ու արմատի վը-  
րայից։

— Չեմ պոկի քեզ, իմ ձյան ծաղիկ, — ասում եր  
Շուշիկն այնպես սիրալիր։

— Իսկ յես կպոկեմ,—ասում էր չարաճճի Արտոն:  
 — Պոկե՞նք թե չպոկենք... Մանուկները վիճում  
 էին առաջին ծաղկի համար: Իսկ արեմն այնպես հա-  
 ճելի տաքացնում էր նրանց գլուխները:

— Սա ձյան ծաղիկ է, սա յերկար չի ապրելու,  
 հենց վոր արևը շա՛տ-շա՛տ տաքացնի, ձնծաղիկն էլ  
 չի լինելու,—ասաց Արտոն ու արմատից պոկեց ձնծա-  
 ղիկը:

Շուշիկն ափսոսանքով նայում էր պոկված ծաղ-  
 կին:



Առաջին ծաղիկը մանուկների մեջ զարթեցրեց մի  
 հրաշալի միտք, նրանք ուզում էին ունենալ ծաղկանոց  
 ու շատ ծաղիկներ, դրա համար խնդրում էին ղեկա-  
 վարին սկսել այդ գործը:

Ղեկավարը շոյում էր նրանց գլուխներն ու ա-  
 սում.—դուք կունենաք ձեր ծաղկանոցը, ձեզանից ամեն  
 մեկը կխնամի մի-մի ծաղիկ:

— Յես կտնկեմ մանուշակ,— աղաղակեց Լուսիկը:  
 — Իսկ յես նարգիզ,— ասաց Աստղիկը:

— Յես սպիտակ շուշան,— ասաց Շուշիկը...


— Իսկ յես... կմկմաց ամենափոքր աղջիկը:

— Դու կտնկես մի հրաշալի կարմիր ծաղիկ՝ ա-  
 նունը կակաչ,—ոգնության հասավ ղեկավարը:

Այնքան ուրախ էին մանուկները, վոր պիտի ու-  
 նենային շատ ու թարմ ծաղիկներ:

Ղեկավարը պետք է ոգներ նրանց ծաղկանոցը մշա-  
 կելու:

Նրանք սոցմրցման հրավիրեցին մի ուրիշ մանկա-  
 պարտեզի մանուկների՝ մանկապարտեզի բակում ու-  
 նենալու լավ, սիրուն ծաղկանոց:



\*\*\*

Շողշողում էր արեմն ու տաքացնում էր հողը:

— Ախ, ի՞նչ լավ է խորհրդային գարունը,—յեր-  
 գում էին մանուկներն ու ծաղկանոցի մարգերը սար-  
 քում. նրանցից ամեն մեկը մի-մի ծաղկի պահապան էր  
 լինելու:

Շուշիկն առաջուց պատրաստել էր ցնցուղը ծաղիկ-

ները ջրելու համար ու անհամբեր սպասում եր նոր հյուրերին, վոր գույնգույն գլխիկներով պիտի յելնեյին հողի շերտերից:

— Յերբ արևը շա՛տ-շա՛տ տաքացնի, մեր ծաղկանոցի ծաղիկներն ել կբացվեն, — աղաղակում էյին մանուկներն ու վազվզում սեվահող մարգերի շուրջը:

\*\*\*

Արդեն բացվել է խորհրդային գարունը, նրա հետ բացվել են կայառու ու զվարթ մանուկներն ու ծաղիկները:

## ԻՆՉ ՊԱՏՍԵՑԻՆ ՅԵՐԵԱՆԵՐԸ



Բենն ընդամենն ութ տարեկան եր. աչքերը փայլփլուն, ձայնը զիլ ու ինքն ել զարմանալի հնարագետ:

Նա շատ եր սիրում խաղալ ու խաղեր հնարել: Մեկ ել տեսար յերեսաները հավաքվեցին, տունը դարձավ խաղարեմ, աթոռները շարվեցին և Բենը կարգադրեց.

— Խաղն սկսում ենք:

Յերեսաները Բենին շատ էյին սիրում, վորովհետև նա գիտեր և՛ խաղալ և՛ հրաշալի պատմություններ հնարել:

Ահա գնացքը, ողանավը, ավտոն և շոգենավն իրար յետևից սլանում են, իսկ Բենը լուսարձակը (կարմիր և կանաչ թղթերից պատրաստած) ձեռքին բռնած խիստ կերպով պահպանում է փողոցի կարգը:

Գո՛ւ ո՛ւ գո՛ւ գո՛ւ գո՛ւ գո՛ւ տո՛ւ տո՛ւ — ավտո Լիլիան սլանում եր շոգեքարչ Մայայի յետևից ու հանկարծ ընկավ, արյունոտ քիթը բռնեց: Լիլիան ձայնը չեր կտրում, իսկ շոգենավ Ալյոշան սլանում եր դեպի ավտո Լիլիան:

Բենը նշան արեց ձեռքը բարձրացնելով՝ կանգնիր:

Ալյոշա շոգենավը սուլեց յերկար ու կանգնեց:

Փողոցի անցուղարձը խանդարվեց:

— Հավաքվեցեք բոլորդ, — կարգադրեց Բենը:

Յերեխաները, թվով տաս հոգի, խաղը թողնելով, շրջապատեցին նրան:

— Իմ լավ ընկերներ, ապա տեսնենք ով ի՞նչ կարող է պատմել, — ասաց Բենը խորամանկ ծիծաղով:

Լիլիան քիթը բռնած, աչքերը կարմրած՝ մոտեցավ խաղընկերներին:

Յերեխաները նստոտած սպասում էին անհամբեր ու նայում իրար յերեսի, թե ո՞վ պիտի առաջինն սկսեր:

— Հը, մի մոմռա դու, Նոն, — հանդիմանեց Բենն ու նստեց սենյակի մեջտեղում:

— Վոտքերով մի թիթփացնի, Մայա, — բղավեց Սոնան:

— Իսկ դու, ապա մի քեզ նայիր, Ալյոշա, կարծես ճաղար լինես՝ ուզում ես փախչել, դե, տեղդ նստիր, հիմա ել հո չողենալ չե՞ս, տես ի՞նչ լավ ենք պատմելու, — նորից խոսեց Բենը:

— Ո՞վ է առաջին պատմողը, թող մատ բարձրացնի:

— Սոնա, դո՞ւ յես ուզում պատմել:

Սոնան առաջինն եր, վոր ցանկացավ պատմել: Վոչ վորք չեր հավատում, վոր Սոնան կարող եր մի բան պատմել:

Սոնան կարմրեց, շարժվեց ժիր թիթեռի պես ու ձեռքերն իրար սեղմած՝ սկսեց պատմել:

— Մի փոքրիկ, շատ փոքրիկ փխիկ յեկավ մեր տուն, իմ տատիկը շատ բարկացավ, ուզում եր նրան խփել, յես վազեցի ու բղավեցի:

— Վայ, չխփես, իմ լավ տատիկ, յես փխիկին շատ եմ սիրում, չի կարելի կենդանիներին ծեծել...

Յեվ տատիկս ինձ լսեց:

— Հետո՞, — անհամբեր աղաղակեցին յերեխաները:

— Հետո են, վոր փխիկին նստացրի ծնկներիս, հազցրի իմ տիկնիկի շորերը, գլխին դրեցի հայրիկիս գլխարկը, ձեռքը բռնեցի ու գնացինք տատիկիս մոտ...

— Բարե, տատիկ, — ասացի, — մենք հյուր ենք յեկել քեզ, ծանոթացիր բժիշկ Գլզլանի հետ — Գլզլանը քեզ կտա գլխացավի դեղ, վորովհետև դու միշտ գանգատվում ես գլխացավից:



Գլզլանը մլավեց ու փախավ — յես ու տատիկս ծիծաղից թուլացանք:

— Ի՞նչ հետաքրքիր եր, — ասացին յերեխաները, — մենք իմացանք, թե ո՞վ եր բժիշկ Գլզլանը:

Սոնան զոհ մնաց իր պատմությունից ու նստեց տեղը:

Ալյոշան կանգնեց համարձակ, վիզը յերկարացրեց և աչքերը ճպճպացնելով սկսեց պատմել:



— Այ, յես ճանաչում եմ յերկար բեխերով, կոմունարկան գլխին այն քաջ մարդուն, ընկ. Բուդյոննուն, տակին հրեղեն ձի ունի, նա գիտե գիպուկ կրակել...

— Ել ի՞նչ գիտի, — հարցրին յերեսաները.

— Բուրժուաների դեմ լավ կռվել գիտի, ահեղ ձայն ունի, ինքն ել մի հսկա, — շարունակեց Ալյոշան:

Տա՛-տա՛, տրա՛տա՛ տրա տա՛ կրակում են կարմիր զինվորները, իսկ Բուդյոննի քեռին նրանց առջևից ե գնում...

Բուդյոննին հերոս զինվոր ե, նրանից վախենում են բուրժուաները և, տեսեք փախչում են:

Տրա տա տրա տա՛...

Ալյոշան վոգելվորվել եր ու բղավում եր իր ընկերների վրա.

— Հը, վախեցա՞ք, բուրժուաներ, մերոնցից, Բուդյոննի քեռուց, նա ձեզ ցույց կտա թե ի՛նչպես կտանջեն արար տղային, հնդիկ տղային, վոր հաց չեն գրանում, քաղցած են ապրում:

Տա-տրա-տրա...

Ալյոշան կանգ առավ նորից, աչքերը կայծկլտացին ու ծիծաղելով ավելացրեց.

— Ինձ ընկ. Բուդյոննին շատ կսիրի, վորովհետև յես ձի նստել շատ եմ սիրում և ձիուս շատ ել լավ կխնամեմ:

Վերջացնելով Ալյոշան ձիու պես խրխնջացրեց ու տեղում նստեց:

Յերեսաները ծափահարեցին:

— Հիմա յես եմ պատմում, — վեր թռավ տեղից Մայան:


— Յես կգնամ ընկեր Ստալինի մոտ, կնստեմ նրա ծնկին... Հայրիկս ասում ե, վոր նա շատ ե սիրում փոքրիկներին:

— Յես նրան կնվիրեմ իմ նկարած սավառնակը, նա շատ կուրախանա, կծիծաղի, այնպես լավ կծիծաղի, իմ գլուխը կռոյի ու կասի՝ տես, Մայա, դու լավ պարպիր, վոր մեծանաս իսկական սավառնակ կառուցես:

— Ի՞նչ կլինի իմ կողմից ել ասես, վոր Սոնան լավ ե պարապում, — միջամտեց Սոնան:

Մայան հպարտությամբ բացականչեց՝ յեթե գրե՛նամ, բոլորիդ մասին ել կպատմեմ...

Յես վերջացրի:



— Դե հիմա ել յես եմ պատմելու, լսեցեք, — ասաց Բենն ու կանգնեց:

Մեծ հեղափոխության տոնին յես նստեցի հորս ձիուն, մի լավ մեջքին մտրակեցի, յես ու ձիս հասանք Հնդկաստան.

— Պահ — աղաղակեցին յերեսաները:

— Հետո ի՞նչ պատահեց:

— Հետո են պատահեց, վոր հնդկացի մի խումբ յերեխաներ հավաքվեցին ու միտինդ արեցինք: Յես ճառ ասացի, վոր պետք է բուրժուաներին տապալել, նրանք այնքան ուրախ եյին: Միտինդից հետո յես նրանց նվիրեցի մի-մի կարմիր աստղ:

Հետո նորից ձիուս նստեցի՝ սպիտակների վոստիկանը հասավ իմ յետևից, ուզում էր ինձ բռնել, այդ ժամանակ ձիս մի լավ քացի տվեց, նա թավալվեց դետնին—հնդիկ յերեխաները ծիծաղում եյին:

Յես մնաս բարով ասացի նրանց ու աղաղակեցի:

— Զվախենաք, հնդիկ յեղբայրներ ու քույրեր, մենք ձեզ հետ ենք:

Յես ձիուս վրա նստած նորից վերադարձա մեր յերկիրը:

Յերեխաները սաստիկ հուզված եյին — դու իսկական քաջ ես, են ժամանակ գրվիր Բուդյոննու գին-վոր:

— Յես բուդյոնական եմ, ընկեր Բուդյոննուն ել նամակ եմ գրել,—ասաց Բենն ու ավելացրեց:

— Յերեխաներ, այսօր վերջացրինք մեր խաղը. վաղվա համար պատրաստվենք, մաքուր հագնվենք և ուրախ յերգերով դիմավորենք մայրամեկյան տոնը:



«Կարմիր Աստղ» կոլտնտեսության յերեխաներն ուրախ եյին, վորովհետև դարուն էր, իսկ դարնանն ամենից շատ ուրախանում են մանուկները: Նրանք թռչունների պես շատ եյին ու թռչկոտում եյին ամեն կողմ:

Այդ աշխույժ փոքրիկներից մեկն էլ Պետիկն էր, վոր մարդկանց, թռչուններին ու բոլոր իրերին նայում էր համարձակ:

Պետիկը նիհար էր, բայց ուժով, վոտքերը փոքրիկ, սրունքները յերկար՝ վազելու շատ հարմար:


Կոլտնտեսության փոքրիկները Պետիկի մասին գիտեյին, վոր նա շատ արագավազ էր, փոքրիկներից դեռ վոչ վոք չէր հաղթել նրան վազքի մեջ. դրա համար էլ նրան կանչում եյին արագավազ Պետո:

Պետիկն իրենց տնից մինչև դաշտ մի շնչով էր վազում: Վազելուց վոր հոգնում էր, նստում էր մի քարի վրա, կամ կանգնում էր իրենց շեմքում՝ սեղ ու փայլուն աչքերը ճպճպացնելով սկսում էր մտածել:

Նա հավատացած էր, վոր ինքը մենակ կարող էր քանդել դեմի բլուրներն ու մեջքով ենքան կրել քարն ու հողը, վոր նրանց տեղը կբացվեր հարթ մի դաշտ:

Ու ելի նրան թվում էր, վոր ինքը կարող էր սամառնակ դեկավարել ու բոլոր սավառնակներից էլ բարձր թռչել, իսկ տրակտոր քչելն ամենից հեշտ էր թվում:

Այդպես հեշտ եր թվում տրակտոր վարելը, վո-  
րովհետեւ Պետիկի հայրը տրակտորիստ եր: Պետոն  
նստում եր ղեկի մոտ հոր կողքին. այդ ժամանակ մի  
տեսնեյիք նրա ուրախությունը: Հողը շերտ-շերտ  
բարձրանում եր ու վախեցած ճնճղուկները դեռ ու դեռ  
եյին փախչում:



Այդպես, կյանքն ուրախ եր դառել կոլտնտեսու-  
թյան բոլոր յերեսաների համար:

Մի առավոտ, յերբ Պետիկը նորից դաշտ վազեց,  
վոր ելի նստի հայրիկի կողքին տրակտորի վրա, այ  
զարմանք, տեսավ բոլորովին այլ պատկեր, հայրիկը  
կանգնել եր անգործ, տրակտորն ել սե գոմեշի պես  
խրվել եր հողում ու չեր բանում:

Իսկ անախտան ճնճղուկները հանգիստ ծլվում  
եյին հողի կոշտերի վրա, մի աներեսն ել դեռ կանգ-  
նել եր տրակտորի ղեկի վրա: Պետոյին իսկի դուր

չեկավ, վոր ճնճղուկներն այդպես յերես եյին առել,  
վոչ հայրիկից եյին վախենում, վոչ ել տրակտորից:

— Հայրիկ, ի՞նչի յես անգործ, տրակտորդ ել չի  
բանում... մոտեցավ հորն ու գլուխը քորելով՝ հարց-  
րեց Պետոն:

— Պետո ջան, նավթը վերջացավ, կոլխոզում  
նավթ չկա, մյուս տրակտորներն ել չեն բանի...

— Բա վո՞րտեղ նավթ կա, — նորից հարցրեց Պե-  
տոն:

— Ս. գյուղի ՄՏ կայանում, — պատասխանեց  
հայրը տրակտորին հենվելով:

Հայրիկը գնաց ընկերների մոտ, իսկ Պետոն  
սկսեց մտածել, վոր Ս. գյուղը վազելը սավառնակ  
ղեկավարելուց, ավտո քշելուց, բլուրներ քանդելուց  
ել հեշտ գործ եր: Պետոն նայեց վոտքերին, հողի վրա  
թփթփացրեց ու տեսավ վոր ուժով եյին: Նա արդեն  
պատրաստ եր, ել ժամանակ չկորցրեց հենց թռավ դե-  
պի մեծ ճանապարհը:

Կանգնեց մեծ ճանապարհի գլխին ու հիչեց Ս.  
գյուղի ճամբան, վորովհետեւ անցյալ տարի մայրիկի  
հետ գնացել եր հենց այդ գյուղը, իր տատի մոտ:

Այնպես արագավազ եր Պետոն, նա թռչում եր  
թեթե ու ճկուն նապաստակի պես:

Թռչուն, ծաղիկ կամ գառնուկներ Պետոյին չեյին  
գրավում, չվազնում եր ու ասում — հիմի գործ ու-  
նեմ, մի ուրիշ անգամ ձեզ հետ կխաղամ:

Պետիկը շատ վոր վազեց հոգնեց, նստեց մի մեծ  
քարի վրա, վոտքը գցեց վոտքի վրա ու սկսեց մտա-  
ծել «կե՛նամ կգտնեմ իսկական հենց իրեն, նախագահին  
ու կասեմ նավթ հասցրեք տրակտորներին»:

Մի մեծ թռչուն թեվերը լայն բացած վշչացնելով  
անցավ Պետիկի գլխի վրայով: Պետոն տեղից ցատկեց  
ու նորից սկսեց վազել:

— Յե՞ս թե դու, յե՞ս թե դու, — չչնջում եր նա սլացող թռչունի յետևից։

Ճանապարհի կեսին մի ճռճուսն սայլ պատահեց։  
Պետիկը թռավ նստեց սայլին ու ելի իջավ։

— Քեռի, յեղներդ շատ ավարկոտ են, յես ել շատ վռազ եմ։

— Այ պուճուր տղա, ո՞ւր ես գնում եղպես չունչդ կտրած, — հարցրեց սայլապանը։

— Գործով եմ գնում, քեռի, կոլտնտեսական եմ...

Սայլը մնաց յետևում։

\*\*\*

Ս. գյուղի յերեխաները խաղում էին գետափին։ Պետոն հասավ նրանց ու հարցրեց։

— Եյ, շուտ ասեք, վո՞րտեղ ե մաշինների կայանը։

Յերեխաները վոտից գլուխ չափեցին Պետիկին, վորի այտերը կարմրել էին, ճակատն ել քրտնած եր։

Մի պիոներ բռնեց նրա ձեռքը։

— Դու պիոներ ես։

— Շուտով կդառնամ պիոներ, — պատասխանեց Պետիկը։

— Դե արի գնանք, յես քեզ կտանեմ կայանը, — ասաց պիոներն ու յերկուսով վազեցին, մյուս յերեխաներն ել նրանց յետևից։

Այնտեղ շատ մեքենաներ կային, վարպետներն աշխատում էին։

Պետիկը մոտեցավ վարպետին ու հարցրեց։

— Ո՞վ ե ձեր մեծը, պետն ելի...

Վարպետը ժպտաց, — իսկ ո՞վ ես դու, փոքրիկ։

— Շատ եմ վռազ, քեռի, շատ...

Դեմից դալիս եր կարճահասակ ու նիհար մի մարդ ուղադրությամբ գիտելով մեքենաները։

— Գնա, հենց եղ ընկերն ե, — ասաց վարպետը։

Պետիկը համարձակ մոտեցավ, վոտքերը դրեց իրարից հեռու, ձեռքերն ել մեջքին ու սկսեց պատմել։

— Նավթ չկա ելի, տրակտորներն ել չեն բանում — գիտե՞ս ինչքան վատ ե, ընկեր պետ, մի տեսնես ծիտերն ել յերես են առել...

— Քեզ ո՞վ ուղարկեց, փոքրիկ — հարցրեց ՄՏԿ-ի գիրեկտորն ու զարմացած շոյեց Պետիկի գլուխը։ — Մարդ չկա՞ր, վոր քեզ պես փոքրիկին են ուղարկել, — չարունակեց գիրեկտորը։

— Իրանք հո՞ չեն ուղարկել, յես եմ վազել ու չեմ հոգնել։

— Յոթ կիլոմետր վոտքով — ինքդ ել այդքան փոքրիկ, շատ չարաճճի ու համարձակ ես յերևում գու...։

Ս. գյուղի պիոներները շրջապատել էին Պետիկին և ուրախ զրուցում էին նրա հետ։

— Մենք կպատմենք քո հերոսության մասին մեր բոլոր պիոներներին։

Պետիկն աչքերը ճպճպացնում եր ու մտածում — «կարծես մեծ բան եմ արել»։

Պետիկի մայրիկն ընկել եր գյուղամեջ ու փնտռում եր Պետիկին։

— Ո՞վ գիտի ել ո՞ւր վազեց, ո՞ւր կորավ մեր Պետոն։

Վերջին տրակտորն ել կանգնեց — նավթը վերջացավ։ Կոլտնտեսականներն անհանգիստ էին. կոլտնտեսության նախագահը կարգադրեց, վոր գնան նավթի յետևից։ Հենց եղ ժամանակ դողողաց բեռնատար ավտոն, նավթի տակառների վրա նստած յերեվաց Պետոն։

Կոլտնտեսականներն ուրախ-ուրախ գլիմավորեցին բեռնատար ավտոն։

— Այ թե ժամանակին հասցրի՞ք՝ թե չե գործը պէտք է յետ ընկներ։ Պետոն թռավ տակառի վրայից ու արագ ուղղվեց, կանգնեց կոլտնտեսականների մեջտեղում։

Դեռ վոչ վոք նրա վրա ուշք չեր դարձնում։

Կոլտնտեսության նախագահը հարցրեց—եղ վո՞նց իմացաք, վոր նավթ չունենք։

— Այ, սրան էք պարտական,—նավթ բերող շոֆե-րը ցույց տվեց Պետիկին։

Բոլորը զարմացած նայում էին փոքրիկ Պետիկին, վոր եղ ժամանակ մի քար վերցրած ուղում եր խփել ճնճղուկներին։

Կոլտնտեսության նախագահը գրկեց Պետոյին ու ասաց— ախր դու եղբան փոքրիկ, վո՞նց հասար գյուղը։

— Վազելով,— պատասխանեց Պետոն։

— Այ մեր արագավազ Պետո, այ թե հաղթող դուրս յեկար։ Մեր տրակտորները չառ չկանգնեցին։

Պետոյի մայրը դիմացից վազում եր ու բղա-վում— Պետո ջան, Պետո...

— Պետոն առողջ է, Պետոն հաղթող է,—կրկնեցին կոլտնտեսականները։

Նորից տրակտորները բանեցին ու հողը շերտ-շերտ բարձրացավ,— սարսափած ճնճղուկները դես ու դեն թռան։ Պետոյի հայրը, ել ավելի յեռանդով սկսեց բանել։

«Կարմիր Աստղ» կոլտնտեսության յերեսաները կրկնում էին,— մեր Պետոն հաղթող է։

Իսկ Պետոն հպարտ նայում եր ճնճղուկներին ու շշնջում։

— Դուք ի՞նչ եք վոր, իսկ յես հաղթող եմ...



## ՏՍՏԻԿԸ

Նրա առաջին և սիրելի ուսուցիչներն էին՝ տա-տիկը, փիսոն ու թռչունները։

Սիմոնիկը նրանցից եր սովորել իր առաջին յեր-գերը, չվոցներն ու ծվլոցը։

Տատիկից սովորել եր «արև, արև, յեկ, յեկ»։

Յերբ արեվը թագնվում եր ամպի տակ, յերբ տա-տիկն ու փիսոն մրսում էին, Սիմոնիկը բարձրանում եր աթոռի վրա ու աչքերը դեպի յերկինք պտտացնե-լով՝ յերգում եր տատիկից սովորած նախշուն յերգը արեվի մասին։

«Արև, արև, յեկ, յեկ, զիզի քարին վեր յեկ...»

Հենց վոր արեվը սահում եր ամպի տակից ու նորից կրակե ասեղներով ծակծկում եր Սիմոնիկի աչ-քերը, նա կհիշալով փախչում եր ու կախ ընկնում տա-տիկի վզից։

— Տատիկ ջան, արեվն ինձ լսեց ու դուրս յեկավ, տես...

## ՓԻՍՈՆ

Սիմոնիկի յերկրորդ ուսուցիչը՝ մեծ ու սպիտակ Մոռանն եր։

Ուրախությունից աչքերը ջրակալում էին, յերբ փիսոն բարակ ու յերկար ձայնով մլավում եր։

Սիմոնիկի ականջները դառնում էյին ձայնի կողմը, վիզը յերկարացնում էր ու ճիշտ փխիկի պես մյա՛ռ, մյա՛ռ, մյա՛ռ կանչում:



Ծեր տատին դժվարանում էր վորոչեւ, Սիմոնիկն էր այդ թե՞ փխիկը, կամ փխիկն էր այդ, թե՞ Սիմոնիկը, ու բարկացած կանչում.

— Կորիւր, անտեր...

Սիմոնիկի փոքրիկ բերանը ուղիղնի պես բացվում էր, սկսում էր թափուկ ծիծաղել ու անչափ ուրախանալ, վոր ինքը չէր տարբերվում փխիկից, վորովհետեւ ինքն էր մյա՛ռ կանչում, թե փխոն, տատին միայն բարկանում էր փխոյի վրա:

Յերբ խաղալուց շատ, շատ էր հոգնում, պառկում

էր փխոյի կողքին ու գլուխը դնում նրա մետաքսե փորին:

Մոռում էր փխոն, մշմշում էր Սիմոնիկը:



### ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Գարնանը վաղ առավոտից նա դրսումն էր:

Եւ չէր նստում իր ձմեռային ընկերների կողքին: Ծինչ ծեր տատին ու մոռան փխոն նստում էյին արևի դեմ՝ մեջքները տաքացնելու, Սիմոնիկը դուրս էր թրուչում:

Արեւ տա՛ք, տա՛ք էր ու յերկինքը կապույտ, կապույտ, թռչունները ծլվլում էյին ու չվացնում:

Սիմոնիկն էլ չէր սիրում փխիկի յերգը. հիմի ուրիշ, ուրիշ թռչուններ կային, ուրիշ, ուրիշ յերգեր, հիմի սովորում էր նոր յերգերը:


Վազում էր կանաչ պարտեզ ու դռնչը վեր բարձրացրած՝ ծլվլացնում էր նրանց պես:

Ու ելի տատիկը չէր իմանում՝ ճնճղուկներն էյին, սառյակը, թե՞ Սիմոնիկը:

Այժմ Սիմոնիկի ամենասիրելի բարեկամներն  
էյին՝ արեւը, ծառերն ու թռչունները:

Փոքրիկ տնակներ՝ կառուցելիս, կամ նկարելիս,  
նա միշտ շվացնում էր: Առանց շվացնելու խաղն ու-  
րախ չէր անցնում:

Դրանից նրա աչտերն ավելի էյին ուռում ու ավե-  
լի վարժ էր շվացնում:



### ՆՈՐ ԾԱՌԵՐԸ

Յերկինքը կապո՛ւյտ, կապո՛ւյտ էր, որը ժպտում  
էր, մանուկներն էլ ժպտում էյին:

Նրանք իրենց փոքրիկ թիակներով փորում էյին  
հողն ու մանկապարտեզի շուրջը փոքրիկ փոսիկներ բա-  
ցում:

Մի շարքի վրա, իրարից յերկու քայլ հեռու,  
կռացած աչխատում էյին՝ լորենու կանաչ շյուղերը  
տնկում էյին փոսիկների մեջ ու արմատներին ջուր  
լցնում:

Մանկապարտեզի ուսուցչուհին հսկում էր նրանց  
աչխատանքին ու ամենքին էլ շյուղեր էր բաժանում:

Մեկ-մեկ շյուղերը կանգնում էյին փոսիկների մեջ,  
իսկ արեւը տաքացնում էր նորատունկ շյուղերի ար-  
մատները:

Մենակ Սիմոնիկն արդեն յերեք շյուղ էր տնկել—  
մեկը՝ տատիկի համար էր, մեկը՝ փիսիկի ու մեկն էլ  
իրեն համար:

Յերբ արևը թագնվեց ամպի տակ, Սիմոնիկը  
չէր մոռացել արևին կանչելը:

Գլուխը բարձրացրեց ու սկսեց յերգել.

Արև, արև,

յեկ, յեկ,

զիզի քարին

վեր յեկ,

թե դուրս կգաս

քեզ կտամ,

թե դուրս չես գա...

— Վոր դուրս գա ի՞նչ կտաս,—հարցրեց Թմիլիկը,  
վոր մի փոքրիկ աղջիկ էր:

— Ի՞նչ կտամ, ի՞նչ կտամ, այ, այ... կմկմաց  
Սիմոնիկն ու հանկարծ բացականչեց.

— Փիսիկի ծառը...

— Արևը թագնվեց, շուտ յերգիր,—խնդրեց Թըմ-  
բիկը:

Սիմոնիկը յերգում էր, մեկ էլ Սուրբիկը մեջ ըն-  
կավ:

Նգպես չի, այ այսպես է.

Արև, արև,

յեկ, յեկ,

կարմիր քարին  
վեր յեկ...

- Չե, իմ տատին ասել ե՛՛ղի՛ քարին...
- Իսկ իմ տատիկը՝ կարմիր քարին...
- Իմ տատիկը՝ զի՛ղի քարին...
- Իմ տատիկը՝ կարմիր քարին...

Թխակները ցած էյին գցել, բարձր, բարձր  
աղաղակում էյին ու հանկարծ բռնեցին իրար գոտ-  
կից:

Աշխատանքը խանգարվեց. յերեսաները շրջապա-  
տեցին նրանց, իսկ ուսուցչուհին շատ, շատ բարկա-  
ցավ:

Սուրիկն ու Սիմոնիկը շատ ամաչեցին ու թիակ-  
ները նորից վերցրին:

Նրանց կողքի յերեսաների շարքը սկսեց յերգել.

Մենք փոքրիկներ ենք,  
Հոկտեմբերիկներ ենք...

Սուրիկն ու Սիմոնիկը մոռանալով իրենց վեճը,  
սկսեցին իրենք ել յերգել:

Ամբողջ խումբը և՛ աշխատում եք և՛ յերգում:

Ծառերը տնկել էյին ու արմատները ջրել. արեվը  
առաջացնում եր ու գուրգուրում նոր ծառերին ու նոր,  
աշխատասեր մանուկներին:

Սիմոնիկը փոքրիկ թիակն ուսին դրած՝ տուն եր  
դնում ու յերգում.

Մենք փոքրիկներ ենք,  
Հոկտեմբերիկներ ենք...

## ՍԻՄՈՆԻԿԻ ՅԵՐԱԶԸ

Յերկինքը կապո՛ւյտ, կապո՛ւյտ եր, արեվը պայ-  
ծառ, պայծառ...

Սիմոնիկի տնկած ծառերը մեծացել էյին ու  
կանաչ ճյուղեր արձակել:

Կարմիր ու դեղին փետուրներով շատ թռչուններ  
նստել էյին ծառերի կանաչ ճյուղերին ու յերգում էյին.

Շվիկ, չվիկ, չվիկ...

Ուրախացավ, ուրախացավ Սիմոնիկն ու  
արթնացավ.

— Մայրիկ, չվիկ, — չվիկը կանչում ե, — բացա-  
կանչեց նա:

Մայրիկը ծիծաղեց, համբուրեց նրա քնկոտ աչքերն  
ու ասաց՝ դու յերագում էյիր:

Առավոտը Սիմոնիկն իսկույն հագավ չորերն  
ու վաղեց մանկապարտեզ, վորպեսզի ջրեր նոր տնկած  
ծառերի արմատները:

Փխոն մլավում եր նրա հետևից, իսկ Սիմոնիկն  
իսկի ուշադրություն չեր դարձնում, վազում եր...

— Ախ ո՞ւր եր թե շուտ, շուտ մեծանային ծառերն  
ու նրանց ճյուղերին յերգեյին այնքան սիրունիկ  
չվիկ-չվիկները, — չչնջում եր Սիմոնիկը:

Յերկինքը կապո՛ւյտ, կապո՛ւյտ եր, արեվը պայ-  
ծառ, պայծառ:



Ծիլերը հողը պատռեցին ու թումբերի վրա շար-  
քով նստոտեցին:

Նոր ծնված մանուկների պես նրանք մերկ էյին  
ու տերեւները դունատ. ծիլերը նստոտեցին ու տաքա-  
նում էյին արեւի տակ:

— Ի՛նչ սիրուն են, ի՛նչ փոքրիկ են,— աղաղակե-  
ցին կոլանտեսության յերեխաներն ու ջուր բերին,  
լցրին ծիլերի արմատներին:

Նրանք միասին էյին ցանել սերմն ու միասին ել  
ջրում էյին, խնամում:

Այդպես ամեն առավոտ նրանք հավաքվում էյին  
մարգերի մոտ ու ջուր բերում, լցնում թումբերի վրա:

Արեւակը տաքացնում եր, ծիլերը մեծանում էյին  
ու կայտառանում:

Հացը կծոտելով, գանգուր մազերով Լորիկը վա-  
զեց և ուզեց կանգնել հենց թումբի վրա:

Զորիկը բռնեց նրա թեւից.

— Կտրորես:

— Կտրորե՛ս,— աղաղակեցին մյուս յերեխաները:

Լորիկը փռովեց գետին ու բարձրաձայն սկսեց լալ.

— Սեմուչկա յեմ ուզում, իմ սեմուչկան:

— Վեր կաց, պապիկս կգա, կբարկանա,— խըն-  
գրում եր Զորիկը:

Բայց Լորիկը բղավում եր ու վոտքերը խփում  
գետին:

Զորիկի պապը գալիս եր, յերեխաները փախչում  
էյին, նրանք վախենում էյին ձեռնափայտից:



Իսկ Զորիկը հպարտ կանգնած եր.

— Պապիկ, ցանել ենք, տես ծիլերը:

Պապը ձեռնափայտին հենված նայում եր ու չչըն-  
ջում:

— Ապրես, բալաս...

Իսկ հեռվից լսվում եր լալկան Լորիկի ձայնը.

— Սեմուչկա յեմ ուզում ո՛ւ ո՛ւ ո՛ւ...

Յերեխաները ցերեկն արեւի տակ խաղացին, ծիւղերը ջրեցին ու յերեկոները քնեցին. ծիւղերն ել նրանց պէս արեւի տակ աճեցին, իսկ յերեկոները քուն մտան:

Յերեկներն արեւն այնքան տաքացրեց ծիւղերին, վոր նրանք մեծացան ու յերկար ցողուններ արձակեցին:

Հետո ելի մեծացան ու ցողունի ծայրին վոսկի արեւի նման դեղին ծաղիկներ բացվեցին ու կլորիկ յերեսով նայեցին արեւին:

Ու այդպէս միշտ արեւին նայեցին ու արեւի հետ չըջվեցին:

— Ծաղիկ, ծաղիկ, արեւածաղիկ, — աղաղակեցին յերեխաներն ու հավաքվեցին արեւածաղիկների մոտ:

— Ի՞նչ լավն էս, արեւի ծաղիկ, — ասաց Աստղիկն ու ցողունը կռացնելով գրկեց նրա գլուխը:

Մյուս յերեխաներն ել նույնն արին, գրկեցին արեւածաղիկների գլուխները և յերեսները դարձրին արեւին:

— Դեռ ելի շատ պիտի մեծանան, — ասում էր Զորիկը:

Նորից վազեց Լորիկը և ուզում էր ցողունը պոկել: Յերեխաները բռնեցին նրան:

Լորիկն սկսեց լալ.

— Ծաղիկ, ծաղիկ, արեւածաղիկ եմ ուզում...

— Զի հասել, չի հասել, — աղաղակում էին յերեխաները:

Ամեն ուր արեւածաղիկները արեւի հետ բացում էին իրենց թերթիկները, ու նրա հետ պտտվում:

— Տես արեւին ինչքան է սիրում, տես, — ասում էին յերեխաները, իսկ Լորիկը թնկթնկում էր:

Մի ուր ել Զորիկը, Հատիկը, Լիզան, լալկան Լորիկը քաղում էին արեւածաղիկները:

Սերմով լցված գլուխները կախվել էին ծանրությունից:

Նրանք քաղում էին ու յերկար ցողունները դնում ուսերին, վազվզում:

Բոլորը քաղեցին.

— Վայ, ել չեն նայելու արեւին, — ասաց Հատիկը, մատը բերանում:

— Ել արեւածաղիկ չե՞նք ունենալու — հարցրեց Լիզան:

— Մեկ ել մյուս տարի, ենքան չա՛տ, — պատասխանեց Զորիկը:



Լորիկը, վոր ամենքից անհամբերն էր, սկսեց չըթացնել թարմ սերմերը. մեկ-մեկ հանում էր ու ատամների արանքում ջարդում:

Քիչ հետո փոքրիկ առվակի ափին դարսել էին արեւածաղիկները: Զորիկը կարգադրություններ էր

անում, փոքրիկ նավակներ եյին պատրաստում. յերեխաների ուրախությանը չափ չկար — խաղը աշխատանքի պես եր ընթանում ու աշխատանքը խաղի պես:

— Ինչքա՞ն արևածաղիկներ պիտի տանենք ու տանք կոլտնտեսության պահեստը, — հաչվում եր Զորիկը...

Յեվ ուտում եյին և խաղում — արևածաղիկները դարսել եյին, հետո յերկար ցողուններն սկսեցին պոկոտել ու թողնել միայն սերմով լիք գլուխները. տանում եյին դեռ ու դեն, նորից բերում — խաղն աշխատանք եր դառնում:

Զորիկի պապը յեկավ նրանց մոտ.

Զորիկն ուրախ բացականչեց.

— Պապի, տանում ենք պահեստ մեր փոքրիկ ընկերների համար տե՛ս...

— Ծաղիկ, ծաղիկ, արևածաղիկ, — աղաղակում եյին յերեխաները



Ամեն առավոտ, յերբ դեպոյի շահը սուլում է գո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Հայրիկն արթնանում է և վազում պարավոգների մոտ:

Արթնանում է փոքրիկ Կիմն ու աչքերը հսկայացնելով մտաբերում, թե ինչպես — փուհ, փուհ, փուհ անելով՝ հոգնած ու փոշոտված պարավոգները մտնում են դեպոն:

Զրընգ, զրընգ, բանվորները բանում են, յերկաթները զրնգում են ու պարավոգները նորոգվում:

Փուհ, փուհ, փուհ, պարավոգը դուրս է գալիս դեպոյից, յերբ արդեն նորոգված է ու փայլում է սեվ գոմեշի պես:

Մագուլթած անիվներն արագ պտտվում են, պարավոգը հանկարծ հասնում է վագոններին, նրանց կապում է իր մեջքից ու փուհ, փուհ, փուհ անելով վազում է դեպի հեռու քաղաքներ:


Ամեն որ այնքան պարավոգներ են գալիս — գնում, ամեն որ հայրիկն ու բանվոր Բորին բանում են զր՛նգ, զրանգ, մտածում է Կիմը, աչքերը ճշպայացնելով: Գո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, դեռ սուլում է գուղոկը:

Կիմը չի կարողանում անկողնում մնալ, արագ հագնվում է ու վազում մոտիկ, շատ մոտիկ դեպոն:

Տանն այնքան տխուր եր, իսկ դեպոյում այնպես ուրախ:

Կիմն իրեն այնքան մեծ է համարում, վոր արդեն կարող է հայրիկի հետ պարավող սարքել: Իր փոքրիկ մուրճը դնում է ուսին ու կանգնում դեպոյում:

— Կիմիկ, մուրճովդ զարկիր, պարավողի դռնչը ծռի, — ասում է բանվոր Բորին, վորը միշտ աշխատում է պարավողի փորի վրա:



Բանվորները ծիծաղում են, իսկ հայրիկն ուրախանում է, այդ իմանում է Կիմը հայրիկի աչքերից:

Կիմն սկսում է յերկաթներին զարկել այնպես ուժով, այնպես ուժով, վոր սաստիկ քրտնում է, ապա հպարտությամբ նայում է բանվոր Բորիին ու կարծես ասում.


— Տես, յես ել եմ պարավող սարքում:

Հենց վոր նորոգված, փայլուն պարավողը փուհփուհ անելով դուրս է գալիս դեպոյից, Կիմը ձեռքերը վեր բարձրացրած աղաղակում է.

— Ուռա՛, ուռա՛...

Ամեն իրիկուն, յերբ հայրիկը վերադառնում է

տուն, Կիմին նստեցնում է իր ծնկներին ու հանդարտ պատմում, թե ինչպես պարավողները գնում են հեռու քաղաքները, յերկար ու ձգված ուղիների վրայով, դրնում են պտտում ամբողջ ԽՍՀՄ-ը, վոր տանում են շատ մարդիկ ու բերում ուրիշներին, վոր տանում են շատ ապրանքներ ու նորերը բերում:



Կիմը տեսնում է փայլուն ուղիներն ու նրանց վրայով արագ անցնող վագոնները. — չիքի, չիքի, փուհ—փուհ...

Հայրիկը պատմում է, վոր իրենց սարքած պարավողները պիտի գնան Չինաստան ու աղաթեն քաղցից մեռնող չին բանվորների մանուկներին:

— Չինաստանը ԽՍՀՄ-ից դուրս է ու հեռու,

ենտեղ հիմի կռիվ կա,—ասում ե հայրիկն ու լռում:

— Իսկ ի՞նչու չեն գնում մեր պարավոզներն ու բերում այն չին մանուկներին,—հարցնում ե Կիմը:

Հայրիկը ծիծաղում ե ու հանդարտ պատասխանում, վոր կգնան, յերբ այնտեղ ել հեղափոխություն կլինի անպատճառ կգնան:

Կիմն անհանգիստ ե, Կիմը չի մոռանում պարավոզն ու չին մանուկներին:

Ամբողջ որը խփում ե յերկաթներին, փորձեր ե անում ու հարցնում բանվոր Բորիին թե ինչպե՞ս ե պարավոզը շարժվում:

Բանվոր Բորին բացատրում ե Կիմին ու մուրճը զրա՛նդ զարկում: Կիմն աչքերը ճաճպացնելով աշխատում ե:

Կիմը պատրաստում ե պարավոզի շշակը, նրան ոգնում ե բանվոր Բորին, հետո հայրիկը: Կիմը պարավոզ ե սարքում:

Հավաքվել եյին դեպոյի բանվորների յերեխաները, յերկաթե կտորներն իրար հետեից շարելով ուսեր եյին դրում:

Կիմը փոքրիկ պարավոզը դրեց ուսերի վրա ու հպարտ նայեց ընկերներին:

— Դե կանգնեցեք, գնում ենք Չինաստան,—ինքը կանգնեց պարավոզի առաջ ու սկսեց փուհ, փուհ անել, —իսկ դուք իմ յետեից յեկեք չիք-չիքի արեք,—կարգադրեց Կիմը:

Կիմը պարավոզի շշակին կպցրել ե Լենայի տիկնիկի կարմիր գոգնոցը: Յերեխաներն աղաղակում են չիք-չիքի-չիքի, իսկ Լենան լալիս ե:

— Տուր իմ տիկնիկի գոգնոցը:

— Սուս, Լենա, թե չե քեզ չենք տանի Չինաստան, — ասաց Կիմն ու վազեց փուհ, փուհ անելով, յերեխաներն ել նրա յետեից: Լենան ել սկսեց վազել:


Կիմը կանգնեց, վորպես թե ջուր ե վերցնում ու կարգադրեց, —հենց վոր հասնենք Չինաստան, բոլոր

յերեխաներին կնստեցնենք մեր պարավոզի վրա ու կըկանչենք ուռա՛:

Յերեխաներն ահագին տեղ վազել եյին, Կիմի պարավոզն ու ուսերը մնացել եյին յետևում, իսկ դեպոյում բանվորները բանում եյին:

— Ուհա՛, հասանք,—ասաց Կիմը:

Յերեխաներից մեկը հետ նայեց ու աղաղակեց,—վայ, մեր պարավոզը կանգնած ե:



Կիմը կանգնեց, հենց եղ ժամանակ դեպոյից դուրս յեկավ իսկական պարավոզը փուհ, փուհ անելով:

Կիմն աղաղակեց,— պարավոզը գալիս ե, ուռա՛ գնում ենք Չինաստան:

Պարավոզը գնաց հեռու և անհայտացավ:

Յերեխաները մնացին կանգնած, Կիմի փոքրիկ և անշարժ պարավոզի կողքին:

— Իսկ ո՞ւր ե Չինաստանը,—ասացին յերեխաները: Կիմը մի քանի րոպե մտածելուց հետո ուրախ բացականչեց:

— Մենք խզուց կգնանք, յերբ վոր պարավոզը կըվառեմ ու կսկսի գնալ փուհ, փուհ անելով:

— Ուռա՛, եզուց, յերբ մեր պարավոզն իսկական կգնա,—աղաղակեցին յերեխաները:

Ու են որվանից դեպոյի յերեխաները յերբեք չեն ուսնում պարավոզն ու չին մանուկներին:



Հուլունքանման աչիկները ճաճպացնելով, փոքրիկ վոտքերը շուտ-շուտ փոխելով՝ Միմին չէր քայլում, այլ վազում էր: Մարտի ցրտից թշիկները կարմրել էյին և գնդակների պես ուռել: Նրա փոքրիկ գլխում ենքան մտքեր էյին ծագում, արմունկներով հրում էր մեծերին ու ճանապարհ բացում իրեն համար:

Այդ առավոտ Միմիի մայրիկը շատ վաղ արթնացավ, դործարան գնալուց առաջ Միմին մաքուր հագցրեց, մազերը սանրեց, թշիկները համբուրեց ու սաց:

— Ուրախացիր, մայրիկդ ել ուրախ է:

Միմին բերերը լայնացրեց իսկ կառավիկի բերերի չափ և մայրիկի կրունկներին հետևելով շարժվում էր մայրիկի հետ, մայրիկի պես:

Մայրիկը կապեց կարմիր թաշկինակը, Միմին ել նույնն էր ուզում անել, բայց կարմիր թաշկինակ չէր գտնում: Մայրիկը կարմիր թաշկինակով ափսոսաբար լավն էր ու Միմիի վրա իսկի չէր բարկանում. չէ՞ վոր Միմին ել ուզում էր մայրիկի նման լինել, դրա համար սկսեց թնկթնկալ, ուզում էր լաց լինել:

— Միմի, եսոր մայրիկների տոնն է, մարտի 8-ը, — ասաց մայրիկը փնտռելով Միմին, իսկ աղջիկը մի անկյունում կանգնած՝ արորում էր աչքերը:

Յերբ մայրիկն ուշադրություն դարձրեց Միմիի վրա ու սկսեց նրա հետ խոսել, Միմին շատ ուրախացավ, մայրիկի գիրկն ընկավ ու սկսեց հարցեր տալ:

— Ինչի՞ վոր, ինչի՞ ուրախանամ...

Մայրիկը պատասխանում էր, իսկ Միմին մայրիկի պես շարժում էր իր շրթունքներն ու կրկնում.

— Բոլոր մայրիկները կարմիր դրոշակներով գնում են շարժ-շարժ ու աղաղակում են, կեցցե Մարտի 8-ը, կանանց միջազգային տոնը: Միմին չէր հասցնում բոլորը կրկնելու, բայց մայրիկի գլուխը կարծես կարմիր դրոշակի պես շարժվում էր առաջ:



Մենակ մայրիկի ասածները չէյին, վոր Միմին լավ էր հիշում, այլ շտապում էր մեծանալ, մայրիկի չափ դառնալ ու գնալ կարմիր դրոշակով:

— Միտինդ, կեցցե... կարմիր ուր, — շուտ շուտ կրկնում էր Միմին և ուզում էր աղաղակել, մեծերին կանգնեցնել ու պատմել: Բայց մոռանում էր իր վճիռը, հենց վոր բռնում էր ավտոմոբիլը, կամ մոտիկ դործարանը, իսկ մեծերը ժպտում էյին Միմիի գեմքին, չոյում էյին նրա գլուխն ու շտապ հեռանում:

Միմին չչնջալով վազում էր:

տանիքներին ջուրը ծլծլում եր նրանց քթին, մազե-

Մանկապարտեզի ընկերները վազվզում էին, իսկ  
րին, ձեռքերին:

— Միմիկ, արի խաղանք, — կանչեց չարաճճի  
Յողիկն ու քիթը պահեց կաթկթոցի տակ, ամբողջ յե-  
րեսը կաթիլներով ծածկվեց: Մանուկները ծիծաղում  
էին:

Միմին ել խաղալ եր ուզում, Յողիկի նման յերեսը  
թրջել, բայց վոր մտածում էո Վայրիկի չափ դառնալ,  
իրեն հեռու յեր պահում:



Ձեռքերը դրպանում մի քանի անգամ դնաց յե-  
կավ, մեծավարի նայեց Յողիկին, Նինելին ու կանգ-  
նեց:

— Յողիկ, Նինել, Արսիկ, հավաքվեցեք, — հանկարծ  
աղաղակեց նա:

Ընկերները հավաքվեցին ու սկսեցին նրան բար-  
կացնել:

— Միմին չի խաղում, Միմին տատիկ է...

Միմին ձեռքը դրեց բերանին ու ասաց:

— Սըս, փոքրիկներ, սպասեցեք...

— Իմի դու մեծ եո հա՞, դու մեծ ե՞ս, — աղմկե-

ցին յերեխաներն ու իրար հրելով առաջ էլին դալիս  
Միմիին հանդիմանելու համար:

Ինչպես, ինչպես դժվար եր մեծ լինելը, Միմին  
քրտնել եր և քիչ եր մնում արտասվեր, յերբ հիշեց  
Վայրիկի կարմիր թաշկինակը, նորից սիրտ առա՞ծ  
կանչեց:



— Յողիկ, Նինել, Արսիկ, լավ ելի:

Թշիկներն սկսեցին դողդողալ, ձեռքը հանեց գրք-  
պանից ու աշխատեց մայրիկի պես լինել:

Մանուկները հանգստացան ու նայեցին Միմիի  
լայնացած բերերին:

— Այ, դուք չեք իմանում եսոր ինչ որ է...

— Մարտի ութն է, դու չես իմանում, դու...

— Հա, — մատը բերանում, ասեց Միմին, մոռացել  
եմ ամսաթիվը:

— Ուրեմն մայրիկների տոնն է, կարմիր որը.  
Իմ մայրիկի, Յողիկի մայրիկի...

— Իմ մայրիկինն էլ, իմ մայրիկինն էլ, — աղաղա-  
կեցին ընկերները և ուզում էին ցրվել, յերբ Միմին  
հիշեց ու կանչեց.

— Դե, միտինդ է, կանգնեցեք, հիմի կանչենք  
ուռա, ուռա՛, ով չի կանգնում, նա բուրժույ է...

Ընկերներն սկսեցին աղաղակել — կեցցե, կեցցե...  
մարտի 8-ը, Միմի, մենք բուրժուա չենք, տես կանգ-  
նեցինք:

— Շարք-չարք, — ասաց Միմին ու հպարտ-հպարտ  
քայլեց առաջից, կարծես արդեն մայրիկի չափ երդար-  
ձել:


Ընկերներն աղաղակում էին

— Ուռա՛, միտինդ Միմի...

Միմին շատ ուրախ եր, վոր միտինդ եր արել, յերբ  
բոլորը տուն էին վազում, վազեց ու Յողիկի պես ինքն  
եւ քիթը պահեց կաթիլների տակ:

Աշխուժ միտինդից հետո զովանում եր, սպիտակ  
ու մանրիկ ատամները յերևում էին ժպտացող չըր-  
թունքների արանքից:

Ուրախ եր միտինդ Միմին:



А. 1937  
Акт № 81  
Вкладн. д.

ՀՀ Ազգային գրադարան



NL0398717

302

7257

ԳԻՆԸ 1 Դ. 40 Կ.

3-1421a

АРАКС  
ДЕТСКИЕ РАСКАЗЫ  
СЕКТОР ДЕТСК. ЮНОШ. ЛИТЕРАТУРЫ  
АРМЕНИЗА ПРИ ЦК. АКСМ АРМ. ЕРЕВАН 1937

891.995  
U-85